Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

# Պետրոս եւ Աղօթքի ուժը



Written by: Edward Hughes
Illustrated by: Janie Forest
Alastair Paterson
Adapted by: Ruth Klassen
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2020 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.



Պետրոս առաքեալ ճամբորդեց ամբողջ քաղաքին կողմերը քարոզելով Յիսուսի մասին: Օր մը Լիտիա կոչուած քաղաքին մէջ ան հանդիպեցաւ մարդու մը, որ անկողին լքուած էր, անդամալուծուած, ութը տարիներէ ի վեր:



"Յիսուս Քրիստոս կը
բուժէ քեզի", ըսաւ
Պետրոս, "ոտքի ել
եւ անկողինդ շտկէ":
Մարդը անմիջապէս
ոտքի ելաւ:
Ժողովուրդը
այս տեսնելով
դարձաւ Տիրոջ:



Մօտակայ Յոպպէ քաղաքին
մէջ ժողովուրդը տխուր էր:
Քրիստոնեայ տիկին մը,
որ Տաբիթա կը կոչուէր
մեռած էր: Տխրութեամբ իր
բարեկամուհիները անոր
թաղման կը

պատրաստէին,
եւ անոր վերի
սենեակը

հանեցին,
որպէսզի բոլորը
մէկ լան անոր վրայ:



Բայց Տաբիթայի
բարեկամուհիները
լսեր էին, որ
Պետրոս իրենց
շրջանին մէջն է:
Անոնք Պետրոսը
կանչեցին, որ
անմիջապէս
Յոպպէ գայ:



Երբ ան
վերի սենեակը
բարձրացաւ,
այրիները
անոր ցոյց տուին
Տաբիթայի կարած
հագուստները
իրենց համար:
Ամէն ոք կու լար:

Սակայն Պետրոս
ամէնքը դուրս
հանեց, ծունկի
եկաւ եւ աղօթեց եւ
դառնալով մարմնին
ան ըսաւ. "Տաբիթա,
ոտքի ել", եւ ան
աչքերը բացաւ եւ
երբ Պետրոսին
տեսաւ նստաւ:





Յետոյ անոր
ձեռքէն բռնելով
բարձրացուց, եւ
երբ ան կանչեց
սուրբերը
(քրիստոնեաները)
եւ այրիները,
անոր ողջ առողջ
ներկայացուց
եւ այդ լուրը
տարածուեցաւ
ամբողջ
Յոպպէի մէջ եւ
շատեր Տիրոջ
հաւատացին:

Պետրոս երկար ժամանակ Յոպպէի մնաց, ծովուն մօտ տան մը մէջ: Օր մը Պետրոս տան տանիքը ելաւ, որ աղօթէ,



քիչ մը հեռուն քաղաքի պատերուն վրայէն եթէ

նայէր ան պիտի տեսնէր, որ երեք ճամբորդներ կու գան զինք տեսնելու:

Այս մարդիկը հռոմէացի
զինուորի մը ծառաներն էին,



որ Կոռնելիոս
կը կոչուէր եւ
Աստուծոյ կը
պաշտէր։

Կոռնելիոս ղրկեց իր ծառաները, որ գտնեն Պետրոսը, որովհետեւ հրեշտակ մը իրեն տեսիլք մը ցոյց տուած էր,



"Պետրոս գտիր: Ան Սիմոնի հետ է, անոր տունը ծովուն մօտն էր: Ան գիտէ կ’ըսէ, ինչպէս պէտք է որ ընես":

Երբ Պետրոս կ’աղաչէր տան տանիքին վրայ,
Աստուած անոր տեսիլք մը ղրկեց: Կարծես երկար
կտոր մը կ’երկարի մինչեւ երկիր: Այդ կտորին
վրայ կային անասուններ
եւ թռչուններ:



Պետրոս կրնար գիտնալ, թէ ասոնք "մաքուր չեն":
Այդ կը նշանակէր, որ հաւատացեալ հրեաներուն
արգիլուած էր ուտելու
անոնցմէ: Յանկարծ,
ձայն մը
եկաւ իրեն:
"Կանգնիր,
Պետրոս,
մեռցուր
եւ կեր":



"Ո՛չ այդպէս, Տէր", պատասխանեց Պետրոս Աստուծոյ: "Որովհետեւ ես չեմ կերած հասարակ եւ անմաքուր բան": Ձայն մը խօսեցաւ իրեն երկրորդ անգամ: "Ինչ որ Աստուած մաքրած է պէտք չէ կոչես հասարակ": Այս երեք անգամ կրկնուեցաւ: Յետոյ կտորը նորէն երկինք քաշուեցաւ:



Պետրոսը չէր հասկնար ինչ էր
իմաստը այդ տեսիլքին: Մտածած
ատեն Աստուած ըսաւ անոր որ
երեք մարդիկ իրեն կը փնտռեն
եւ անոնց հետ
պէտք է երթայ:





Երբ երեք մարդիկը ըսին Պետրոսի սուրբ հրեշտակին թելադրածը Կոռնելիոսի, որ իրեն կանչէ, Պետրոս գիտցաւ, որ Աստուած իրեն կ’առաջնորդէ: Յաջորդ օրը, ինքը եւ վեց ընկերներ գացին Կոռնելիոսի տունը:







Թերեւս, երբ ան կ'երթար ոչ
իրեայի մը տունը, Պետրոս
սկսաւ հասկնալ, թէ
Աստուած կը սիրէ բոլոր
ժողովուրդները եւ թէ
Աստուած կ'ուզէ բոլոր
պետութիւնները ճանչնան
Յիսուսը, որ աշխարհի
Փրկիչն է: Երբ Պետրոս
հասաւ Կոռնելիոս առջեւը
ինկաւ պաշտելու զայն:

"Ոտքի ելիր: Ես ինքս ալ մարդ եմ", ըսաւ Պետրոս Կոռնելիոսին: Յետոյ Պետրոս տունը գտնուող բոլոր մարդոց ըսաւ. "Դուք գիտէք, թէ ինչքան օրէնքի դէմ է, որ հրեայ մը ընկերակցի ուրիշ երկրի մարդոց հետ":



"Բայց Աստուած ինծի ցոյց տուաւ, որ որեւէ մէկու մը հասարակ կամ անմաքուր կանչեմ":



Պետրոս ըսաւ այս հեթանոսներու
(ոչ-հրեաներուն), որ Յիսուս ինքն է Աստուծոյ
Որդին, որ մահացաւ խաչին վրայ եւ համբարձաւ,
որպէսզի Ան ըլլայ Փրկիչը ամբողջ աշխարհի:



Յետոյ Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ եւ անոնք սկսան փառք տալ Աստուծոյ: Պետրոսին վեց իրեայ ընկերները ապշած էին: Այս, կարծես հոգեգալուստ էր: Սուրբ Հոգիին նուէրը կը թափէր Կոռնելիոսին եւ ներկաներուն վրայ ալ: Յետոյ Պետրոս Յիսուսով մկրտեց նոր հաւատացեալները:



Երուսաղէմի մէջ քրիստոնեաները, մեղադրեցին Պետրոսին հեթանոսներուն այցելելուն պատճառով: Ուրեմն Պետրոս ըսաւ անոնց իր եւ Կոռնելիոսի տեսիլքին մասին, որ աղօթքով ստացաւ: Երբ այս բաները լսեցին, Երուսաղէմի քրիստոնեաները լուռ մնացին եւ անոնք փառք տուին Աստուծոյ, Ան աղօթքով ցոյց տուաւ քրիստոնեայ եկեղեցոյ,
որ Աստուծոյ սէրը
ամէնուն է:



# Պետրոս եւ Աղօթքի ուժը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 9 - 12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

# Վերջ

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի ղրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16